

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-487-08.04.2014-ՊԱ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով ներկայացված տուգանքների չափերի նվազեցումը պատշաճ հիմնավորված չէ, քանի որ հաշվի է առնված միայն նշանակված տուգանքների գումարային չափը: Մինչև օրենքի նախագծի ընդունումն անհրաժեշտ է կատարել համապատասխան վերլուծություն՝ տուգանքների չափերը շաղկապելով խախտումների վտանգավորության աստիճանի հետ:

Օրենքի նախագծի ընդունումը կարող է բացասական ազդեցություն ունենալ ճանապարհային պատահարների նախականխման տեսանկյունից:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հարկ ենք համարում հայտնել, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը պետք է ուսումնասիրի ճանապարհային երթևեկության կանոնների հաճախակի խախտումների դեպքերի, թվի, դրանց համար կիրառվող տուգանքների չափերի վիճակագրությունը, միջազգային փորձը և ներկայացնի համապատասխան առաջարկություն:

Նկատի ունենալով նշված հանգամանքը՝ օրենքի նախագծի հեղինակին առաջարկում ենք առայժմ ձեռնպահ մնալ օրենքի նախագծի քննարկումից և դրան անդրա դառնալ աշխատանքային խմբի աշխատանքների ավարտից հետո:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը, իսկ արտահերթ ելույթի իրավունքով հանդես կգա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Արթուր Օսիկյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության
օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի ընդունման դեպքում

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության
օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության
օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հան-
րապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության
օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբ-
յեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշ-
խարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բա-
ցասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանտ-
նակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակա-
սում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատես-
վող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակա-
գրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության
օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝
բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության
օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է նվա-
զեցնել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության
օրենսգրքի 124-րդ, 124.7-րդ, 124.7-րդ և 305-րդ հոդվածներով սահմանված որոշ վարչական
իրավախախտումների համար նախատեսված տուգանքների դրույքաչափերը: Ելնելով վերո-
գրյալից՝ օրենքի նախագծի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի եկամուտ-
ների նվազեցման:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունման ազդեցու-
թյունը ՀՀ պետական բյուջեի վրա կոնկրետ գնահատել հնարավոր չէ՝ հաշվի առնելով վե-
րոնշյալ խախտումների հնարավոր թվի վերաբերյալ վիճակագրական կամ որևէ այլ տեղե-
կատվության բացակայությունը:

Եզրակացություն

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա: Նախագիծը

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**։

թ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**։

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Պ-487-08.04.2014-ՊԱ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգիրքի (6 դեկտեմբերի 1985 թվական) այսուհետև Օրենսգիրք, 124 հոդվածի՝

- 1) 1-ին մասում «հնգապատիկի» բառը փոխարինել «կրկնապատիկի» բառով:
- 2) 2-րդ մասում «տասնապատիկի» բառը փոխարինել «եռապատիկի» բառով:
- 3) 5-րդ մասում «հնգապատիկի» բառը փոխարինել «կրկնապատիկի» բառով:
- 4) 21-րդ մասում «հնգապատիկի» բառը փոխարինել «կրկնապատիկի» բառով:
- 5) 22-րդ մասում «տասնապատիկի» բառը փոխարինել «եռապատիկի» բառով:
- 6) 23-րդ մասում «քառասնապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 124.4 հոդվածի՝

- 1) 1-ին մասում «տասնապատիկի» բառը փոխարինել «եռապատիկի» բառով:
- 2) Ավելացնել նոր՝ 1.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «Երթելության սահմանված արագությունը 11-20 կմ/ժ-ով գերազանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի վեցապատիկի չափով»:
- 3) 2-րդ մասի «11-30» թվերը փոխարինել «21-30» թվերով:

Հոդված 3. Օրենսգրքի 124.7 հոդվածից հանել «հնգապատիկի» բառը:

Հոդված 4. Օրենսգրքի 305 հոդվածում՝

- 1) Երրորդ պարբերության «եռապատկվում է» բառերը փոխարինել «ավելանում է հիսուն տոկոսով» բառերով:
- 2) Չորրորդ պարբերության «հնգապատկվում է» բառերը փոխարինել «կրկնապատկվում է» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության օրենքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանում տեսանկարահանող եւ լուսանկարահանող սարքերի միջոցով երթեւեկության կանոնների խախտումներ արձանագրելու պրակտիկայի կիրառումը հանգեցրել է վարչական տուգանքների համախառն ծավալի գրեթե եռակի աճի:

Այսպես՝ 2011 թվականի արդյունքներով Ճանապարհային ոստիկանության տեսուչների կողմից երթեւեկության կանոնների խախտման համար նշանակվել է 2 մլրդ 925 մլն 153 հազար դրամի համախառն տուգանք:

2012 թվականին, երբ արդեն գործարկվել են տեսանկարահանող եւ լուսանկարահանող սարքերը՝ պատկերը կտրուկ փոխվել է: Ճանապարհային ոստիկանության տեսուչների կողմից նշանակված տուգանքների համախառն չափը կազմել է 1 մլրդ 997 մլն 757 հազար դրամ, իսկ արագաչափերի եւ տեսախցիկների կիրառմամբ նշանակվել է 5 մլրդ 061 միլիոն 300 հազար դրամի տուգանք: 2013-ին այդ թվերը համապատասխանաբար կազմել են՝ 2 մլրդ 397 մլն 752 հազար դրամ եւ 8 մլրդ 950 մլն 165 հազար դրամ:

Վերը բերված վիճակագրությունը հիմնավորում է այն տեսակետը, որ տեսանկարահանող եւ լուսանկարահանող սարքերով երթեւեկության կանոնների խախտումներ արձանագրելու պրակտիկան գոնե առայժմ չի զարգացնում երթեւեկության կարգապահությունը: Փոխարենը առաջացնում է լրացուցիչ էական ֆինանսական բեռ՝ ՀՀ քաղաքացիների վրա, ինչի ազդեցությունը ընդգծվում է էլեկտրաէներգիայի, բնական գազի սակագների թանկացման, 32.5 տոկոս աղքատության ֆոնի վրա:

Ներկայացված նախագծով առաջարկվում է՝

ա) էականորեն կրճատել երթեւեկության կանոնների մի շարք նվազ վտանգավոր խախտումների համար նախատեսված տուգանքի չափերը: Խոսքը վերաբերվում է առավելապես այն խախտումներին, որոնք առավել հաճախակի արձանագրվում են տեսանկարահանող եւ լուսանկարահանող սարքերի կողմից:

բ) սահմանված առավելագույն արագության գերազանցումը 11-ից 20 կմ/ժ-ով դիտարկել որպես առանձին իրավախախտում:

գ) էականորեն կրճատել վարչական տուգանքը օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու պարագայում նախատեսված՝ տուգանքի հավելաճի չափերը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք. Նախագիծը մշակել է ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը: